# ԼԵՈՅԻ ՄԻ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԻԼՅԻՉ ՍՆԽՉՅԱՆ

Վաստակաշատ պատմաբան Լեոն իր բազմաթիվ աշխատություններում ու հոդվածներում, անդրադառնալով հայ ազատագրական շարժման ու նրա կողմնորոշման հարցերին, սկզբից մինչև վերջ անց է կացրել այն միտքը, թե Ռուսաստանն էր այն միակ երկիրը, որ օբյեկտիվորեն շահագրգռված էր Անդրկովկասում թուրք-պարսկական տիրապետության տապալմամբ։ Նա այս միտքն է զարգացրել հայ ազատագրական շարժման կողմնորոշման հարցերը քննելիս՝ սկսած հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորումից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։

Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման պատմությունը շարադրելիս Լեոն հիմնականում մերժեց կղերա-ազնվականական պատմագրության սուբյեկտիվ գնահատականները ցարիզմի քրիստոնեասիրության, մարդասիրության և անշահախնդրության մասին, միաժամանակ ցույց տալով, որ Ռուսաստանը միակ երկիրն էր, որի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս օբյեկտիվորեն նպաստում էր երկրամասի ժողովուրդների ազատագրական իղձերի իրականացմանը, և որ «արևելյան հարց անունը կրող դարավոր հանգույցը միայն ռուսաց սրով պիտի կտրվի»[1]։ Նա գտնում էր, որ այդ էր միակ ելքը Պարսկաստանի և Թուրքիայի կողմից ստրկացված ժողովուրդների համար, որովհետև Ռուսաստանը «բերում էր արևելքի բազմատանջ ժողովուրդներին կյանքի ու գույքի ապահովություն»[2]։

Լեոն բարձր էր գնահատում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այն համարելով այնպիսի մի իրադարձություն, որին հայերը «ջերմեռանդ հավատով սպասել էին մի շարք դարեր։ Այդպիսի մի օրի ակնկալությունը նվիրական մի ուխտ էր, սրբազան մի ավանդ, որ սերնդից սերունդ էր անցնում իբրև միակ մխիթարություն մարտիրոսական տանջանքների մեջ»[3]։

Լեոն իր աշխատություններում ցույց է տալիս նաև, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին է՛լ ավելի ուժեղացրեց արևմտահայերի ձգտումը՝ վերամիավորվելու ռուսական տիրապետության տակ անցած արևելահայության հետ։ «Այն ժամանակից,— դրում է Լեոն,— երբ ռուսաց իշխանությունը հաստատվեց Անդրկովկասում և սկսեց զենքի ուժով ոչնչացնել Պարսկաստանի տիրապետությունը, Թուրքիայի հայերը նույնպես աչք դարձրին դեպի հյուսիսային քրիստոնյա ազգը, նրա մեջ էին տեսնում այն ուժը, որ կարող էր աղատել իրենց Թուրքիայի լծից»[4]։

---

1 Լ ե ո, Գրիգոր Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1902, էջ 399։

2 Լ ե ո, Հայոց պատմություն (նորագույն շրջան, ձեռագրի իրավունքով), մասն. Բ, Երևան, 1926, էջ 315։

3 Լ ե ո, Զանգուի ափերից («Հորիզոն», 1910, № 267)։

4 Լ ե ո, Գրիգոր Արծրունի, հ. 2, էջ 407։

Անդրադառնալով արևմտահայության ազատագրական շարժման ու նրա կողմնորոշման հարցերին, Լեոն համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ թուրքական տիրապետությունն իր հաստատման առաջին իսկ օրից դաժան հնշման ու կեղեքման արյունոտ ռեժիմ էր հաստատել Արևմտյան Հայաստանում, որի անմիջական հետևանքն էլ եղավ հայ ժողովրդի անընդհատ ակտիվացող պայքարը թուրքական տիրապետության դեմ։ Նա տեսնում էր, որ Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայերի համար գոյություն չունեին կյանքի համար անհրաժեշտ ամենատարրական պայմաններ անգամ, որ թուրքական տիրապետության պայմաններում, կոտորածների ու արտագաղթերի հետևանքով, հայ ազգաբնակչության թիվը անընդհատ նվազում էր։ «Թուրքիայից հեռացող հայության համար,— գրում է նա,— դարերից ի վեր մի ընդհանուր պատճառ է գոյություն ունեցել և դա թուրքական իրականությունն է։ Այդ իրականությունն այնպես էր, որ նույնիսկ հայտնի, նշանավոր մարդիկ էլ ոչ մի կերպով պաշտպանված չէին հարստահարություններից, բռնություններից»[5]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, մյուս առաջադեմ հայ մտավորականների նման, Լեոն անմիջապես կանգնեց սովետական կարգերի պաշտպանության դիրքերում։ Արշակ Չոպանյանին գրած նամակում այդ առթիվ նա գրում է. «Հայաստանի ներկա կառավարությունը աշխատում է անխոնջ ու անդադար, որպեսզի կարողանա մեզ վիճակված փոքր հողամասը, որքան կարելի է շատ բարենպաստ դարձնելու տնտեսական աուաջադիմության համար։ Բավական է Ձեզ հիշեցնել միայն մի ձեռնարկություն... Շիրակի ջրանցքը»[6]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Լեոն փորձեց վերանայել իր աշխարհայացքը, և այդ տարիներին նրա գրած աշխատությունները ինչ-որ չափով իր ամբողջ գիտական ժառանգությունը վերանայելու փորձ էին։ Սակայն պատմությանը մատերիալիզմի դիրքերից մոտենալու Լեոյի փորձերը մասամբ միայն հաջողվեցին։ Իր աշխարհայացքը վերանայելու փորձերում Լեոն 1920-ական թվականներին զերծ չմնաց վուլգար սոցիոլոգիզմի ազդեցությունից, որը նրան հանգեցրեց սխալ հետևությունների նաև հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում։ Այս կապակցությամբ վերջին շրջանում սովետահայ պատմագրության մեջ միտում է նկատվում Լեոյի պատմագիտական ժառանգությունը գնահատելիս շեշտը դնել նշված տարիներին գրված նրա աշխատություններում տեղ գտած իսկապես սխալ տեսակետների վրա, զանց առնելով նրա ողջ գիտական ժառանգությունը։ Մեր կարծիքով՝ մանավանդ անընդունելի է, երբ փորձ է արվում այդ սխալները ներկայացնել որպես Լեոյի աշխարհայացք ընդհանրապես։ Այնինչ, կարծում ենք, այս հարցում Լեոյի ամբողջական տեսակետը պարզելու համար ելակետ պետք է ընդունել ոչ թե 1920-ական թվականներին թույլ տված առանձին սխալները, այլ նրա նախասովետական շրջանի շուրջ 40 տարվա գիտական հարուստ ժառանգությունն ամբողջությամբ վերցրած։ Հայ-ռուսական հարաբերությունների գնահատման տեսանկյունից մոտենալով խնդրին, պիտի նշենք, որ այդ ժառանգությունը գիտակցումն է այն բանի, որ միայն Ռուսաս-

5 Նույն տեղում, հ. 1, էջ 5։

6 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Չոպանյանի արխիվ, Լեոյի նամակը Ա. Չոպանյանին (№ 2843)։

տանն ու ռուս ժողովուրդն էին, որ կարող էին սատար լինել հայ ժողովրդին՝ պարսկա-թուրքական բռնապետությունների դեմ նրա մղած դարավոր պայքարում։

Խնդրո առարկա հարցի լուսաբանման, ինչպես նաև Լեոյի հայացքների ուսումնասիրման տեսակետից առհասարակ, որոշակի հետաքրքրություն ունի Լեոյի մի անտիպ աշխատությունը, որը գտնվում է Լեոյի հարազատների մոտ, Թբիլիսիում։ Աշխատությունը բաղկացած է մոտ քսան աշակերտական տետրերից։ Այնտեղ լուսաբանվում են հայ ժողովրդի վիճակը և ազգային-ազատագրական շարժման ծավալումը Արևմտյան Հայաստանում 1850—1870-ական թվականներին։ Աշխատության մեջ արտացոլված Լեոյի հայացքների, ինչպես նաև ձեռագրի զննությունը մեզ բերել են այն համոզման, որ աշխատությունը գրվել է նախասովետական շրջանում, հավանաբար, համաշխարհային պատերազմի տարիներին, կամ պատերազմից անմիջապես առաջ։ Այս աշխատության սկիզբն ու վերջը չկան, այն չունի թվական և չի էջակալված։

Աշխատության մեջ հակադրվելով այն տեսակետին, թե մինչև 1878 թ. հայ ժողովրդի վիճակը Թուրքիայում բարվոք էր, Լեոն վկայակոչում է 1876 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից հրատարակված «Տեղեկագիր գավառական հարստահարությանց» ժողովածուն։ «Ազգային պատրիարքարանի այդ պաշտոնական հրատարակությունը,— գրում է նա,— մի շատ թանկագին պաշտոնական վավերագիր է, որի մեջ երևում է թուրքական դժոխքի հարազատ, ապացուցված պատկերը... Կարդալով այդ անպաճույճ, պաշտոնական սառն ոճով գծագրված էջերը, մենք հասկանում ենք, թե որքան թշվառ է մի խաղաղ կուլտուրական ժողովուրդ, ասիական բարբարոս կարգերի այդ անսահման բռնակալության տակ»։ Բերված փաստերից եզրակացնում է, թե քանի գոյություն ունեն թուրքական բռնապետական կարգերը, հայ ժողովուրդն իր վիճակի որևէ բարելավում սպասել չի կարող։ Նկարագրելով Արևմտյան Հայաստանի վիճակը 1840-ական թվականներին, նա գրում է. «Քրդստանը 40-ական թվականների կեսին դարձյալ զորեղ շարժում սկսեց... քրիստոնյա ազգաբնակության համար նորից դառն օրեր սկսվեցին։ Վանի, Մուշի, Տիգրանակերտի, Բալուի, Բաղեշի և այլ տեղերի հայությունը դառն հարստահարությունների ենթարկվեց, կեղեքվում էր կատաղած վայրենիների ձեռքով, որոնց արարքներին հանդարտ ու անտարբեր էին նայում Վանի ու Էրզրումի թուրք իշխանավորները։ Ոչինչ միջոցներ ձեռք չառան այդ փաշաները և հայտնի է, որ նրանք ստանում էին քրդական ավարներից հայտնի մաս»։

Այնուհետև Լեոն վկայակոչում է 1855 թ. Կովկասյան ռազմաճակատում գործող գեներալ Լիխուտինի աշխատությունը, որտեղ նույնպես հանգամանորեն նկարագրված են հայ ժողովրդի ապրած սարսափները թուրքական տիրապետության տակ՝ 1850-ական թվականներին։

Լեոն համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ հայերը մասսայաբար կողոպտվում և անպատվվում էին ոչ առանց կենտրոնական կառավարության գիտության։ «Անգլիացի Ֆրեդերիկ Մելինգեն,— գրում է Լեոն,— որ ծառայում էր թուրքական զորքերի մեջ Օսման Սեյֆի-բեյ անունով, հետևյալն է պատմում. «...1863 թվին Մուշի փաշալքում հայերը բացարձակ ապստամբեցին իրենց հարստահարող քրդերի դեմ, հետո պատգամավորություն ուղարկեցին Կ. Պոլիս, պարտավորեցնելով նրան նկարագրել սուլթանական կառավարության առաջ իրանց կրած տանջանքները և խնդրել պաշտպանություն։

Ֆուադ փաշան (մեծ վեզիր), անտարբեր լսելով հայ պատգամավորների դանգատները, ընթացք չտվեց նրանց արդարացի գործին։ Իսկ երբ հայերը մեծ վեզիրին հայտնեցին, թե հայ ազգաբնակչությունը ստիպված կլինի գաղթել Ռուսաստան, որպեսզի գոնե դրանով ազատված լինի քրդական բռնակալությունից, Ֆուադ փաշան բարկացած աղաղակեց. «կորեք ուր ուզում եք»։

... 1865 թ. նույն փաշալքի հայ համայնքները նորից ապստամբվեցին կատաղի թուփառականների դեմ և Կ. Պոլիս ուղարկեցին մի նոր պատգամավորություն՝ բաղկացած 24 հոգուց, այս անգամ իրան, սուլթանին խնդիրք տալու։ Ըստ սովորության, խնդիրքը հանձնվեց Ֆուադ փաշային, իսկ նա վճռեց բանտարկել տասնհինգ պատգամավորներ...։ Այսինքն թե ինչպես հանդգնեցին գանգատվել փադիշահին»։

Լեոն հետաքրքիր փաստ է վկայակոչում, որտեղ թուրքական մեծ վեզիրն անգամ 1876 թ. խոստովանում էր, թե հայերի վիճակը մի քանի տասնամյակ առաջ ավելի վատ էր։ «2000 հոգուց բաղկացած մի ամբոխ սեպտեմբերի 5-ին (1876 թ.),— գրում է Լեոն,— ուղղակի դիմում է մեծ վեզիրին, պահանջում է, որ հարստահարություններին վերջ տրվի։ Մեծ վեզիրը խոստանում է մի քանի օրից պատասխան տալ։ Եվ իրավ 8-ին բողոքողների կողմից ընտրված ութ պատգամավորների պատասխանում է՝ բայց ի՞նչ։ Մի քանի տասնյակ տարի առաջ հարստահարությունները գավառում ավելի շատ էին,— ասաց նա,— այժմ 80 տոկոս պակաս է։ Ուրեմն բողոքողները դեռ պիտի գոհ լինեն, թե չէ կարող էր ավելի վատ լինել»։

Լեոն նկատում է նաև, որ շատ դեպքերում թուրք ու քուրդ խաժամուժը գործում էր թուրքական կառավարության ուղղակի հրահանգներով։ Նկարագրելով 1876 թ. դեկտեմբերի 1-ին Վանի շուկայում բռնկած հրդեհը, նա գրում է. «Վանեցի հայը նկատել էր և մի ուրիշ բան։ Ներսես պատրիարքը դանգատներ էր գրում, իսկ Բ. Դուռը պատասխանում էր նրան զանազան խոստումներով, սակայն տեղական իշխանությունները ոչ միայն նկատի չէին առնում բարձր կառավարության հրապարակական խոստումները, այլև ավելի սաստկացնում էին իրենց ապօրեն արարքները։

Արդյոք սա չէ՞ր նշանակում, որ խոստումներ անող Բ. դուռը գաղտնի հրահանգներով ոգևորում էր իր ստորադրյալներին կարելի եղածին չափ հանդուգն ու անվախ լինել իրանց գործողությունների մեջ»։

Քննելով արևմտահայ սահմանադրության հարցը, Լեոն գտնում է, որ այն չէր կարող որևէ էական փոփոխություն մտցնել հայկական կյանքում, որովհետև հայերի ծանր վիճակը բխում էր թուրքական կառավարության էությունից, և քանի դեռ պահպանվում էր սուլթանի ֆեոդալական բռնապետական ռեժիմը, անհնար էր հայ ժողովրդի վիճակի որևէ բարելավում սպասել։ «Ահագին ոգևորությամբ ողջունված սահմանադրությունը,— գրում է Լեոն,— տվեց այն հիմնարկությունները, այն կենտրոնացումը, այն գավառական ժողովները, որոնք պիտի բարեկարգեին գավառացու կեցությունը։ Բայց թուրքահայերի այս ամենամեծ օրենսդրական առաջադիմությունն էլ իսկապես նույն քաղաքական ռոմանտիզմն էր ներկայացնում։ Հայերը լավ թե վատ բարենորոգեցին իրենց վարչական հիմնարկությունները այնպես, որ ժողովրդի շահերը ավելի լավ պահպանված լինեին։ Բայց կարող էին

նրանք բարելավել նույնպես թուրք կառավարության սիստեմը... կառավարությունը.... շարունակում էր իր վաղեմի անկերպարան ընթացքը։ Հայերս կարծում էին, թե վատ են միայն գավառական, տեղային թուրք իշխանությունները, թե կենտրոնական իշխանությունը, Բ. դուռը կարող է զսպել իր ստորին պաշտոնյաներին, եթե լավ տեղյակ լինի նրանց գործած գեղծումներին։ Սակայն բանից դուրս եկավ, որ բարձր կառավարությունն էլ նույն կամայական անկարգությունն էր ներկայացնում։ Բարի կամքի պակասությունը չէր դժբախտության պատճառը, ինչպես կարծում էին Կ. Պոլսի հայ գործիչները, այլ այն սիստեմը, որ Թուրքիայի պետական կազմակերպության հոգին էր ներկայացնում»։

Լեոն գտնում է, որ նման պայմաններում, երբ թուրքական կառավարությունը ոչ միայն չէր ցանկանում, այլև չէր կարող կյանքի ու գույքի ապահովության նվազագույն իսկ պայմաններ ստեղծել իր հպատակների համար, հայ ժողովրդին մնում էր սեփական ուժերով կազմակերպել իր ինքնապաշտպանության գործը։ «Առաջին իսկ հայացքից,— գրում է նա,— դիտողի առջև դուրս է գալիս մեծ անարդարության իսկական պատճառը։ Գիշատիչ ցեղեր, զինված ու պատրաստ, ստրկացրել են խաղաղ ու կուլտուրական տարրերը։ Այնպիսի մի աշխարհում, ուր կառավարություն իսկապես չկա, ուր ամեն ինչ հիմնված է կոպիտ ուժի վրա, ուրիշ տեսակի մի հարաբերություն չի էլ կարելի երևակայել գիշատիչների ու անպաշտպան երկրագործների մեջ։ Միակ միջոցը, անասնական դրության հասած կեղեքվածներին մարդկային փոքր ի շատե ապահովված հասարակական կազմակերպության բարձրացնելու համար, կլիներ այդ տարրերին ինքնապաշտպանության գաղափար ներշնչելը։ Զենքի գործածությունը միայն կարող էր հայ գյուղացուն գույքի, իրավունքների պաշտպանության ամենակտրուկ միջոցը հայթայթել»։

Թուրքական բարբարոս քաղաքականությունն այնքանով, որքանով այն ուղղված էր հայության դեմ ընդհանրապես, ճնշում էր հայ ժողովրդի բոլոր խավերին։ Սակայն Լեոն այս աշխատության մեջ բացահայտում է այն խոր հակամարտությունը, որ գոյություն ուներ արևմտահայ աշխատավորության ու շահագործող դասակարգերի միջև։ Նա ցույց է տալիս, որ թուրքական լուծն առանձնապես ծանրացած էր արևմտահայ աշխատավորության՝ գյուղացիության ուսերին, և այդ իմաստով հայոց հարցը Թուրքիայում «գավառացի հայության հարցն է», և որ «այդ հարցը զուտ գյուղացիական է»։ Նա գտնում է, որ հայ հարուստ վաճառականության ու պաշտոնեության գոյությունը որևէ նշանակություն չունի և որևէ չափով չի թեթևացնում հայ գյուղացու վիճակը և որ այս առումով հայ ժողովրդի կողմից թուրքական տիրապետության դեմ մղվող պայքարը ոչ միայն ազգային, այլև սոցիալական պայքար է։ «Հայատյացությունը ամբողջ աշխարհը թնդացնում է այն առասպելներով,— դրում է Լեոն,— թե հայերը պետք է գոհ լինեն իրանց վիճակից Թուրքիայում, քանի որ վաճառականությունը նրանց ձեռքումն է, քանի որ պետական ծառայության մեջ կարևոր պաշտոններ են ստանում, իսկ եթե նրանք գոհ չէին իրենց վիճակից, ասում է հայատյացությունը, պատճառն այն է, որ իրանց սեփական թագավորությունն ստեղծելու ցնորքներ ունեին... Մինչդեռ փաստերը, ամբողջ պատմությունը աղաղակում են, որ դա բուն ռամկավարական շարժում է իր էությամբ, մի շարժում, որի նշանաբանն է «հող

ստրուկ գյուղացուն»։ Սկզբում այդ նշանաբանին չէր ավելացվում և կանոնավոր կյանքի համար անհրաժեշտ մյուս մեծ պահանջը՝ «ազատությունն»։ ...Առևտրական և պաշտոնյա հայերի բարեբախտության մասին ճառողները անբարեխղճաբար մոռանում են, որ դրանք հայ ժողովրդի մի չնչին մասն են կազմում և իրանց դասակարգային շահերով ուղղակի թշնամի են հողագործ բազմության, որ ազգի ահագին մեծամասնությունն է կազմում։ Այդ մեծամասնությունը գտնվում է ամենախայտառակ ստրկության մեջ, որի նմանը անկարելի է գտնել աշխարհի ոչ մի կողմում»։

Սոցիալական տարբեր վիճակների գոյությունն էլ հենց հայ ժողովրդի տարբեր խավերին ստիպում էր տարբեր վերաբերմունք ունենալ հայ ազատագրական շարժման նկատմամբ։ Չարքաշ ու անապահով կյանքով ապրող հայ գյուղացու համար «հայկական դատի հիմնական էությունը հողային հարցն էր, բարդացած հողային փտած սիստեմի բոլոր հանգամանքներով». և, հետևաբար, նրան ամենից առաջ անհրաժեշտ էր հող և այդ հողը մշակելու ու ստացած բարիքների տերը լինելու ազատություն։ Այս իմաստով արևմտահայ աշխատավորությունը կենսականորեն շահագրգռված էր, որպեսզի Արևմտյան Հայաստանը միանա Ռուսաստանին։ Լեոյի կարծիքով Կ. Պոլսի հայ բուրժուական մտավորականության մի որոշ մասը, ընդհակառակը, երբեմն դեմ էր արտահայտվում Արևմտյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին՝ ցուցադրելով նեղմիտ բուրժուական մտայնություն և ինչպես հարկն է ծանոթ չլինելով արևմտահայ իրականության։ Նշելով դա, Լեոն գտնում է, որ արևմտյան մտավորականության այդ հատվածը «այսպես խոսում և դավանում էր այն պատճառով, որ դատում էր հեռվից, երբեք անձամբ, տեղնուտեղը չշփվելով Հայաստանի իրականության հետ։ Այդպես մտածում էր քրդի ու փաշաների, բեյերի հարստահարություններից հեռու ապրող մարդը։ Իսկ հայաստանցի՞ն։ Ահա մի օրինակ նույն պատերազմի (Ղրիմի պատերազմի—Ի. Ս.) ժամանակից։ Իշխան Բեհբութովը 1854-ի նոյեմբերի 18-ին չարդ ու փշուր արավ թուրքաց բանակը և հազարավոր հայեր ազատեց գերությունից։ Այդ ազատվածների մի ահագին խումբ, թվով ոչ պակաս 1000 հոգուց, բաղկացած տղամարդկանցից, կանանցից ու երեխաներից. ինչպես պատմում է ականատես զինվորը, թափվեց ռուս զորքերի շարքերի մեջ, արտասվելով շնորհակալական իր զգացմունքն էր հայտնում, համբուրելով զինվորների ոտներն ու ձեռները։ Լաց էին լինում ամենքը, լաց եղան և զինվորները... Ահա իրական ռեալ քաղաքականությունը։ Մարդը մի որևէ եկեղեցու, որևէ ազգության, որևէ գաղափարի պատկանելուց առաջ ուզում է լինել իր կյանքի ու գույքի տեր մի մարդ»։ Ահա թե ինչու արևմտահայ գյուղացիությունն ավելի վճռականորեն էր հանդես գալիս թուրքական բռնակալության դեմ, ավելի ջերմեռանդորեն էր փարում ռուսական կողմնորոշմանը, քան պոլսահայ վերնախավի առանձին ներկայացուցիչներ։ Վերջիններս 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբում բոլորովին այլ վերաբերմունք հանդես բերին դեպի պատերազմող կողմերը, քան արևմտահայ աշխատավորությունը, և «այն ժամանակ, երբ Ներսեսի օրհնությամբ հայ կամավորները մտնում էին թուրք զինվորների շարքերը, Հայաստանում բարձրացած էին տանջվող քրիստոնյաների հեծեծանքները»։ Լեոն խստորեն դատապարտում է Ներսես

Վարժապետյանի թրքասիրական ցույցերը պատերազմի նախօրյակին։ «Եվ այսպես,— գրում է նա,— Հայոց պաարիարքարանը, իրև արաահայտիչ Կ. Պոլսի հայ խոշոր բուրժուազիայի և բյուրոկրատիայի ձգտումների, իր հայրենասիրական պտրտքը կաաարեց, պաաերազմի քվե տալով թուրք կառավարության... Պոլսահայ էֆենդիին կամ աղային ինչ փույթ, որ այստեղ՝ Վանի, Ալաշկերտի, Բասենի, Մուշի շրջաններում պատերազմը պիտի կյանքի կտտարյալ վերջնական խորտակում լինի»։ Լեոն խիստ քննադատում է նաև Կ. Պոլսի ու Թիֆլիսի այսօրինակ գործիչներին, որովհետև Արևմտյան Հայաստանում կաաարվող գազանությունների համար նրանք «պաարաստ էին ամբողջ մեղքը թշվառ ժողովրդի վզին գցելու։ Թիֆլիսի «Մեղուն» գատապարտում էր թուրքահայերին, որ նրանք գրգռում էին թուրքերին, իաշ ու խաշվառով դիմավորելով ռուսաց գորքը»։ Աաելությամբ լցված պոլսահայ ջոջերի նկատմամբ, որոնք իրենց շահերով կապված էին սուլթանական կառավարության հետ, Լեոն գժբախտություն է համարում, որ նրանք են անօրինում հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող գործերը։

Այսպիսով, Լեոյի հրշյալ անաիպ աշխաատությունը մի նոր ապացույց է, որ հայ ազատագրական շարժման, նրա կողմնորոշման հարցերը քննարկելիս Լեոն կանգնած էր այն ճիշտ աեսակեաի վրա, որ ֆիզիկական ընաջնջման վտանգից ազատագրվելու, կյանքի ու գույքի ապահովության հասնելու միակ միջոցը հայ ժողովրդի, այդ թվում արևմտահայության համար հանգիսանում էր ակտիվ ազգային-ազատագրական պայքարը թուրք-պարսկակտն զավթիչների դեմ, և որ այդ պայքարում նրան կարող էր օգնել միայն նրա հզոր հյուսիսային հարևանը՝ Ռուսաստանը։

## НЕОПУБЛИКОВАННАЯ РАБОТА ЛЕО

ИЛЬИЧ СНХЧЯН

### Резюме

Несмотря на отдельные ошибочные положения, высказанные Лео в последние годы жизни, при оценке его научного наследия нетрудно убедитсья в том, что он высоко ценил роль России в освободительной борьбе армянского народа против турецкого деспотизма. В этом отношении представляет несомненный интерес одна из неопубликованных рукописей Лео, хранящаяся у его родственников в Тбилиси. Работа, вероятно, написана историком накануне первой мировой войны. Рукопись не озаглавлена и не пронумерована. В этой работе Лео, опираясь на богатый фактический материал, показывает, что в условиях султанского владычества армянский народ, подвергаясь жестокой эксплуатации и преследованиям, вел освободительную борьбу против своих угнетателей и в этой борьбе постоянно пользовался помощью России.